ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող, ինչպես նաև «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից GPON տեխնոլոգիայով համատեղ մատուցվող Ծառայության յուրաքանչյուր Բաժանորդ կարող է Ծառայությունների մատուցումը ժամանակավոր կասեցնելու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնել Օպերատորին նախատեսված կասեցման օրվանից առնվազն 1 օր առաջ՝ նշելով Ծառայությունների մատուցումը կասեցնելու կոնկրետ ժամանակահատվածը:
   Կասեցված ժամանակահատվածների գումարային տևողությունը կարող է լինել առավելագույնը 1 օրացուցային տարի **(այսուհետ՝ Կասեցման առավելագույն ժամանակահատված)** 1 (մեկ) օրացուցային տարվա **(այսուհետ՝ Սահմանված ժամանակահատված)** ընթացքում:
2. Սույն պայմանների կետ 1-ում նշված **Կասեցման առավելագույն ժամանակահատվածից՝**
   - առաջին 60 օրերի ընթացքում (այսուհետ՝ **Անվճար կասեցման առավելագույն ժամանակահատված**) Ծառայությունների կասեցման համար վճար չի գանձվում:
   - հաջորդող օրերի ընթացքում (այսուհետ՝ **Վճարովի կասեցման առավելագույն ժամանակահատված**) Ծառայությունները կասեցվում են սույն պայմաններով սահմանված ամսավճարի դիմաց: Վճարովի կասեցման համար սահմանված ամսավճարը գանձվում է հետվճարային կարգով և ըստ օրերի:
3. **Անվճար կասեցման ծառայությունը** նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող կանխավճարային ու հետվճարային սակագնային փաթեթների համար:
   Վճարովի կասեցման ծառայությունը նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող հետվճարային սակագնային փաթեթների համար (կանխավճարային սակագնային փաթեթներով տրամադրվող Ծառայությունների շրջանակում հնարավոր չէ ակտիվացնել **Վճարովի կասեցման ծառայությունը**):
4. Ֆիզիկական անձ հանդիսացող Բաժանորդները **Ժամանակավոր կասեցում** ծառայությունից կարող են օգտվել միայն Ժամանակավոր կասեցման ծառայության ակտիվացման համար դիմելու պահին ոչ բացասական հաշվեկշռի առկայության պարագայում: Տվյալ դեպքում եթե Ծառայությունները կասեցնելու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելիս կասեցվող օրերի մեջ առկա է վճարովի կասեցման ժամանակահատված, ապա Բաժանորդը վճարում է կանխավճար առնվազն վճարովի կասեցվող օրերի դիմաց հաշվարկվող անհրաժեշտ վճարի չափով: Սույն կետում նշված չափով կանխավճարի բացակայության դեպքում Վճարովի կասեցման ծառայությունը չի ակտիվացվում: Անվճար կասեցման համար սահմանված չէ նվազագույն կանխավճար:

Իրավաբանական անձ հանդիսացող Բաժանորդները **Ժամանակավոր կասեցում** ծառայությունից կարող են օգտվել միայն Ժամանակավոր կասեցման ծառայության ակտիվացման համար դիմելու պահին ժամկետանց պարտքի բացակայության պարագայում:

5. Եթե Բաժանորդը ներկայացրել է Ծառայությունների ժամանակավոր կասեցման վերաբերյալ գրավոր դիմում, ապա անհրաժեշտության դեպքում և Բաժանորդի համապատասխան դիմումի հիման վրա՝

   ա. հնարավոր է վաղաժամ ակտիվացնել կասեցված Ծառայությունները: Տվյալ դեպքում Բաժանորդը հետագայում (մինչև **Սահմանված ժամանակահատվածի** ավարտը) ստանում է հնարավորություն՝ օգտագործելու կասեցման համար նախկինում պատվիրված, բայց չօգտագործված օրերի քանակը, որոնք նախատեսված են կասեցման համար մինչև **Սահմանված ժամանակահատվածի** ավարտը,

   բ. Հնարավոր է երկարաձգել Ծառայությունների ժամանակավոր կասեցման ժամանակահատվածը համապատասխան դիմումի մեջ նշված օրերի քանակով:

6. Վճարովի կասեցման ամսավճարը ֆիզիկական անձանց համար սահմանված է 2000 (երկու հազար) դրամ՝ ներառյալ ԱԱՀ, իսկ իրավաբանական անձանց համար՝ 4000 (չորս հազար) դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

7. **Սահմանված ժամանակահատվածի** սկիզբը հաշվարկվում է Բաժանորդի մոտ առկա Ծառայության/Ծառայությունների առաջին կասեցման պահից: **Սահմանված ժամանակահատվածի** ավարտից անմիջապես հետո սկսվում է նոր **Սահմանված ժամանակահատված** վերը նշված **Կասեցման առավելագույն ժամանակահատվածով** 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում. նոր **Սահմանված ժամանակահատվածում** հնարավոր չէ օգտագործել նախկին **Սահմանված ժամանակահատվածում** տրամադրված և չօգտագործված **Կասեցման առավելագույն ժամանակահատվածի** մնացորդային օրերը:

8. Եթե Բաժանորդն արդեն իսկ օգտվել է **Ժամանակավոր կասեցման** ծառայությունից որոշակի ժամանակահատվածով և կատարում է անվանափոխություն կամ հասցեափոխություն, ապա նոր/անվանափոխված/ Բաժանորդի մոտ կամ նոր բաժանորդային հասցեում Ժամանակավոր կասեցման պայմանները չեն թարմացվում. այսինքն, Բաժանորդը անվանափոխությունից/հասցեափոխությունից հետո շարունակում է օգտվել ժամանակավոր կասեցման ծառայությունից այն պայմաններով, ինչ օգտվում էր մինչև անվանափոխությունը/հասցեափոխությունը (չեն փոխվում **Սահմանված ժամանակահատվածը** ու **Կասեցման առավելագույն ժամանակահատվածը**, կասեցման ենթակա օրերի մնացորդային քանակը և այլն):

9. Ժամանակավոր կասեցման ծառայության պայմանները (Սահմանված ժամանակահատվածը, Կասեցման առավելագույն ժամանակահատվածը, Անվճար կասեցման առավելագույն ժամանակահատվածը, Վճարովի կասեցման առավելագույն

ժամանակահատվածը, Վճարովի կասեցման համար սահմանված ամսավճարը և այլն) կարգավորվում են Բաժանորդի և ոչ թե առանձին ծառայության մակարդակով, սակայն Բաժանորդի ցանկությամբ հնարավոր է միաժամանակ կասեցնել բոլոր կամ ոչ բոլոր Ծառայությունները: Անկախ նրանից, թե միաժամանակ քանի Ծառայություն է կասեցվում՝ Կասեցման առավելագույն ժամանակահատվածը 1 օրացուցային տարի, Անվճար կասեցման առավելագույն ժամանակահատվածը (60 օր), Վճարովի կասեցման առավելագույն ժամանակահատվածը մնում են անփոփոխ: Ծառայության կասեցում (վճարովի կամ անվճար) է համարվում տվյալ պահին սույն պայմաններով սահմանված կարգով առնվազն 1 Ծառայության կասեցումը, որն էլ հիմք է հանդիսանում համապատասխանաբար նվազեցնելու կասեցման ենթակա (վճարովի կամ անվճար) օրերի քանակը **Կասեցման առավելագույն ժամանակահատվածից:**

Եթե Բաժանորդն օգտվել է Ժամանակավոր կասեցման ծառայությունից և **Սահմանված ժամանակահատվածում** կատարում է անցում նոր Ծառայության, ապա վերջինիս շրջանակում **Կասեցման առավելագույն ժամանակահատվածի** (ներառյալ Անվճար կասեցման առավելագույն ժամանակահատվածի ու Վճարովի կասեցման առավելագույն ժամանակահատվածի) մնացորդային օրերի քանակը չի փոխվում:

10. Եթե Բաժանորդի մոտ ակտիվ է ավելի քան 1 Ծառայություն, և նա ապագա ամսաթվով նախատեսում է կասեցնել 1-ից ավելի Ծառայություն, ապա ապագայում կասեցվող բոլոր Ծառայությունների համար կասեցման սկզբնաժամկետը պետք է լինի նույնը՝ անկախ նրանից տվյալ պահին Բաժանորդի մոտ արդեն իսկ կան կասեցված Ծառայություններ, թե ոչ:
11. Եթե Բաժանորդը ցանկանում է կատարել Ժամանակավոր կասեցում և **Կասեցման առավելագույն ժամանակահատվածն** օգտագործելու դեպքում Ծառայությունները հնարավոր է կասեցնել առնվազն մինչև հաջորդ **Սահմանված ժամանակահատվածի** սկիզբը, ապա հնարավոր է ժամանակավոր կասեցման տվյալ (միևնույն) դիմումի հիման վրա միանգամից օգտագործել նաև հաջորդ **Սահմանված ժամանակահատվածի** համար նախատեսված **Կասեցման առավելագույն ժամանակահատվածի** օրերից:
12. Ժամկետանց պարտքի պատճառով կամ Ծառայությունների որակի հետ կապված Ծառայությունների կասեցումները ազդեցություն չեն ունենում **Կասեցման առավելագույն ժամանակահատվածի** տևողության վրա:
13. Սույն պայմանները գործում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից GPON տեխնոլոգիայով մատուցվող, ինչպես նաև «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից մանրաթել շուկայում (տեխնոլոգիա՝ GPON) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար համատեղ մատուցվող Ծառայությունների Բաժանորդների համար՝ ներառյալ այն Բաժանորդների, ովքեր մինչև սույն պայմանների կիրառության մեջ մտնելն արդեն իսկ օգտվել են ժամանակավոր կասեցման Ծառայությունից: Եթե Բաժանորդը մինչև սույն

պայմանների կիրառության մեջ մտնելն արդեն իսկ օգտվել է ժամանակավոր կասեցման ծառայությունից, ապա նրա մոտ պահպանվում է ընթացիկ **Սահմանված ժամանակահատվածի** սկիզբը, ինչպես նաև մինչև ընթացիկ **Սահմանված ժամանակահատվածի** ավարտը հասանելի **Կասեցման առավելագույն ժամանակահատվածի** մնացորդը:

14. Ժամանակավոր կասեցման ծառայության ակտիվացման դեպքում մինչև կասեցված ժամանակահատվածի ավարտը ապաակտիվանում են՝
   - ինտերնետ Ծառայությունը,
   - ֆիքսված հեռախոսակապի Ծառայության ելքային զանգերը, բացառությամբ դեպի առաջին օգնության և Օպերատորի Զանգերի կենտրոն կատարվող ելքային զանգերի,
   - տվյալ պահին ակտիվ բոլոր հեռուստաալիքները, ինչպես նաև ցանկացած տեսակի գնման հնարավորություն (ներառյալ հեռուստաալիք, թեմատիկ փաթեթ, ֆիլմ, ֆիլմերի փաթեթ կամ Եթերի տեսագրում ծառայություն գնելու հնարավորությունը):